

ՀԱՅՅԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ՏՆՕՐԻՆՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Վարդուշ ԵՍԱՅԱՆ

ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի հայրորդ

Հանրահայտ է, որ իր իրավունքների և օրինական շահերի դատական պաշտպանության իրավունք ունի ոչ միայն այն անձը, որը դիմում է դատարան, այլ նաև նա, ում դեմ ներկայացվում է հայցը: Ըստ այդմ էլ դատավարական օրենսդրությամբ կարգավորվող իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հայցային ձևը երաշխիքներ է պարունակում ոչ միայն հայցվորի, այլ նաև պատասխանողի համար: Այդ երաշխիքները բխում են դատավարության մրցակցային ձևի պայմաններում կողմերի իրավահավասարության սկզբունքից, որն առաջին հերթին արտահայտվում է նրանում, որ ինչպես հայցվորն իրավունք ունի որոշակի դատավարական միջոցներով իրականացնելու իր խախտված կամ վիճարկվող իրավունքների պաշտպանություն, այնպես էլ պատասխանողը հայցը չընդունելու դեպքում կարող է օրենքով սահմանված որոշակի միջոցներով պաշտպանվել իր դեմ հարուցված հայցից:

Բայց միշտ չէ, որ վարույթն ընթանում է նման բարդ ուրվագծով: Քիչ չեն այն գործերը, որոնցում պատասխանողն ընդունում է հայցվորի ներկայացրած նյութաիրավական պահանջը:

ՔՂՕ 32-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է. «Պատասխանողն իրավունք ունի ամբողջովին կամ մասնակիորեն ընդունել հայցը»:

Հատկանշական է, որ հայցն ընդունելու դատավարական կարգին և հետևանքներին օրենսդիրը որևէ այլ նորմի շրջանակներում չի անդրադառնում¹: Տվյալ հանգամանքը տեսագործական բնույթի բազմաթիվ հարցեր է առաջացնում, որոնք քննարկվող ինստիտուտի վերլուծությունը դարձնում են օբյեկտիվ անհրաժեշտություն:

Դատավարագիտության մեջ մշակվել են հայցի ընդունման դատավարական գործողության տարբեր հասկացություններ: Գ. Մ. Արզումանյանն իր թեկնածուական ատենախոսության մեջ հայցն ընդունելը բնորոշում է որպես «հայցային պահանջները բավարարելու հետ պատասխանողի՝ դատարանում արտահայտված անվերապահ համաձայնություն»²:

Ռ. Գ. Պետրոսյանը հայցի ընդունում է համարում «ներկայացված հայցապահանջների հետ դատարանում պատասխանողի արտահայտած անվերապահ համաձայնությունը, որը հանգեցնում է հայցը բավարարող վճռի կայացման»³:

¹ «Հայցի ընդունում» արտահայտությունը հիշատակվում է միայն ՔՂՕ-ի 119-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում, ըստ որի՝ դատարանն իրավունք ունի հետաձգել գործի քննությունը, եթե պատասխանողն ամբողջովին ընդունել է գույքի բռնագանձման վերաբերյալ հայցը և պարտավորությունը կատարելու համար միջնորդել է դատարանին որոշակի ժամկետ տրամադրելու խնդրանքով, և 120-րդ հոդվածում, որը նիստը նախագահողին պարտավորեցնում է պարզել արդյոք պատասխանողն ընդունում է հայցը:

² *Արզումանյան Գ. Մ.*, Իրավունքների պաշտպանության հայցային ձևը, իրավ. գիտ. թեկն. ... ատենախոսություն, Եր., 2006, էջ 129:

³ *Պետրոսյան Ռ. Գ.*, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարություն, 4-րդ հրատ., Եր., 2012, «Ոսկան Երևանի» հրատ., էջ 259:

«Հայցից հրաժարվելը, - գրում է Ի. Մ. Պյատիլետովը,- պատասխանողի կողմից դատարանում արված կամահայտնություն է, որը պարունակում է հայցային պահանջը բավարարելու և հայցվորի համար բարենպաստ վճիռ կայացնելու միջոցով վարույթն ավարտելու վերաբերյալ նրա անվերապահ համաձայնությունը»⁴:

Ա. Ա. Ֆերենց-Սորոցկու բնորոշմամբ՝ «հայցի ընդունումը պատասխանողի կողմից դատարանում արտահայտված անվերապահ համաձայնությունն է՝ բավարարելու իր դեմ ներկայացված պահանջները, որը հանգեցնում է հայցի բավարարման»⁵: Ըստ հեղինակի՝ այն տնօրինչական բնույթ ունի, քանի որ դրա կտարմամբ պատասխանողը փաստորեն հրաժարվում է իր իրավունքների դատական պաշտպանության դատավարական բոլոր միջոցներից⁶:

Վ. Ա. Ոյազանովսկին և Գ. Լ. Օսոկինան, հայցի ընդունումը դասելով տնօրինչական դատավարական գործողությունների թվին, այն բնորոշում են որպես հայցվորի կողմից վկայակոչված և նրա պահանջի հիմքում ընկած բոլոր փաստերի ընդունում, ինչը դատարանին իրավունք է վերապահում առանց գործի հանգամանքների հետագա հետազոտման կայացնելու հայցը բավարարելու մասին վճիռ⁷:

Վ. Վ. Յարկովի բնորոշմամբ՝ «հայցն ընդունելը հայցվորի կողմից հայցի հիմքում դրված փաստերի և նրա ներկայացրած պահանջի իրավաչափության անվերապահ ընդունումն է պատասխանողի կողմից»⁸:

Բերված և դատավարագիտության մեջ առկա բոլոր մյուս բնորոշումների ընդհանրացումը թույլ է տալիս առանձնացնելու հայցն ընդունելու մի շարք հատկանիշներ, որոնք բնութագրում են տվյալ դատավարական գործողությունը:

Հայցի ընդունումը, ինչպես և հայցից հրաժարվելը *միակողմանի* դատավարական գործողություն են: Հայցն ընդունելու պատասխանողի կամահայտնությունը կարող է արտահայտվել ինչպես դատարան ներկայացված դատավարական փաստաթղթում (օրինակ՝ հայցադիմումի պատասխանում, հակընդդեմ հայցում կամ ներկայացված դիմումում), այնպես էլ դատական նիստում արված բանավոր հայտարարության մեջ: Բոլոր դեպքերում մնան կամահայտնությունը դատարանի մոտ առաջացնում է այն քննարկելու և դրա հետևանքները լուծելու պարտականություն:

Հայցի ընդունումը *անվերապահ (անպայմանական)* գործողություն է: Տնօրինչականության սկզբունքի ուժով պատասխանողը պարտավոր չէ դատարանին ներկայացնել, իսկ դատարանն էլ իրավունք չունի ստուգել հայցն ընդունելու շարժառիթները: Հայցվորի պահանջները կարող են ընդունվել տարբեր նկատառումներով. օրինակ՝ այն պատճառով, որ պատասխանողը համոզվել է, որ հայցապահանջը հիմնավորված է և բխում է իր ու հայցվորի միջև գոյություն ունեցող իրավահարաբերությունից, կամ պարզապես չի ցանկանում հայցվորի հետ շարունակել վեճը: Այդուհանդերձ, դատարանը պետք է հավաստիանա, որ հայցի ընդունումը պատասխանողի իրական և ոչ թե խաթարված կամ-

⁴ **Пятилетов И. М.** Распоряжение сторон гражданскими материальными и процессуальными правами в суде первой инстанции. Автореф. дисс... к.ю.н. М., 1970, էջ 21:

⁵ Гражданский процесс. Под ред. **В. А. Мусина, М. А. Чечиной, Д. М. Чечота.** Құтқи хեղինակ Ференц-Сороцкий А. А. М., 1998, էջ 175:

⁶ Տե՛ս նույն տեղում:

⁷ Տե՛ս **Рязановский В. А.** Единство процесса, М., 1996, էջ 61, **Осокина Г. Л.** Гражданский процесс: общая часть. 3-е изд. М.: "Норма", 2013, էջ 635:

⁸ Гражданский процесс. Под ред. **В. В. Яркова.** 8-е изд. М.: "Инфотропик медиа", 2012, էջ 272, 277:

քի արդյունք է, որը պայմանավորված չէ հայցվորի կողմից որոշակի գործողություններ կատարելու կամ որոշակի գործողություններ կատարելուց ձեռնպահ մնալու վերաբերյալ որոշակի խոստումներով: Ղատարանի խնդիրն է հանդգնել, որ պատասխանողը, հայցն ընդունելով, լիովին հրաժարվում է իր իրավունքների պաշտպանության դատավարական բոլոր միջոցներից, ընդունում է հայցվորի ներկայացրած պահանջի իրավաչափությունն ու դրա հիմքում դրված հանգամանքների առկայությունը և չի առարկում գործի քննությունը դադարեցնելու և վեճը հոգուտ հայցվորի լուծելու դեմ:

Ինչպես հայցից հրաժարվելը, այնպես էլ հայցն ընդունելը չեն կարող տեղի ունենալ վերապահումներով, որոշակի պայմաններով, քանի որ դա վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո կարող է հանգեցնել պայմանի կատարման կապակցությամբ նոր վեճի առաջացման կամ անխուսափելիորեն կհանգեցնի պայմանական վճռի կայացման անհրաժեշտության, ինչը, սակայն, դատավարական օրենսդրությամբ չի թույլատրվում⁹:

Թեև անվերապահությունը (անպայմանականությունը) հայցն ընդունելու օրենսդրորեն ամրագրված հատկանիշ չէ, այնուամենայնիվ այն հարկ է դիտել որպես քննարկվող գործողությունը հաշտության համաձայնությունից տարբերելու հիմնական հատկանիշ: Եվ եթե կոնկրետ գործի քննության ընթացքում պատասխանողը ցանկություն է հայտնում որոշակի պայմաններով ընդունելու հայցը, դատարանը պետք է կողմերին առաջարկի քննարկելու հաշտության եզրերը և վեճը լուծելու հաշտության համաձայնությամբ: Համենայն դեպս, պայմանով ընդունումը նման իրավիճակներում պետք է ճանաչվի ոչ իրավաչափ և չի կարող առաջացնել այն դատավարական հետևանքները, որոնք ծագում են հայցն ընդունելու դեպքում:

Գտնում ենք, որ դատարանները պետք է ստուգեն՝ կապված չէ արդյոք հայցի ընդունումը հետագայում հայցվորի կողմից որոշակի գործողություններ կատարելու կամ որոշակի գործողություններ կատարելուց ձեռնպահ մնալու կամ որևէ համարժեք հատուցում տրամադրելու մասին հայցվորի խոստումների կամ որոշակի պահանջներից հրաժարվելու հետ: Ընդ որում, մեր կարծիքով, այդ պարտականությունը պետք է ուղղակիորեն ամրագրվի ՔԴՕ-ի նորմերում:

Հայցի ընդունման դատավարական գործողության կարևորագույն հատկանիշ է **հայցը բավարարող վճռի կայացմանն ուղղված լինելը**: Հայցի ընդունումը, ինչպես և հայցից հրաժարվելը ունեն որոշակի նպատակային ուղղվածություն: Ինչպես նշվում է վերը ներկայացված, այնպես էլ այլ դատավարագետների բնորոշումներում, տվյալ դատավարական գործողությունը միշտ ուղղված է հայցը բավարարող վճռի կայացմանը:

Հայցի ընդունումը չի հանգեցնում հայցի վերացման, թեև վեճը կողմերի միջև ըստ էության դադարում է: Այդ իսկ պատճառով դատարանը ոչ թե կարճում է գործի վարույթը, ինչպես հայցից հրաժարվելու դեպքում է, այլ պարտավոր է վիճելի իրավահարաբերության անվիճելիությունն ամրագրել վեճը հոգուտ հայցվորի լուծող վճռով: Հայցն ընդունելու դեպքում վեճն ըստ էության լուծող վճիռ կայացնելը պայմանավորված է այնպիսի դատական ակտ կայացնելու անհրաժեշտությամբ, որում հրամայական ձևով ամրագրվում են պատասխանողի կողմից ընդունված պարտականությունները, և որի հիման վրա այդ պարտականությունները կամովին չկատարելու դեպքում կարող է տրվել կատարողական թերթ:

⁹ Այդ մասին մանրամասն տես **Մեղրյան Ս. Գ.**, Առաջին ատյանի դատարանի քաղաքացիական գործերով դատական ակտերը, Եր., ԵՊՀ հրատ., 2010, էջ 37-39:

Ուշագրավ է, որ ՀՀ գործող ՔՂՕ-ն, պատասխանողին վերապահելով հայցի ընդունման իրավունք, դրա իրավական հետևանքներն ուղղակիորեն չի կարգավորում, ինչը, մեր կարծիքով, օրենսդրական բաց պետք է համարել: Նման բացի պայմաններում դատական պրակտիկայում հայցն ամբողջությամբ ընդունելու դեպքում դատարանը ավարտում է գործի քննությունը և հեռանում է վճիռ կայացնելու: Հայցը մասնակիորեն ընդունելու դեպքում դատարանը գործի քննությունը չի ավարտում՝ վարույթը շարունակելով այն պահանջների մասով, որոնք պատասխանողի կողմից չեն ընդունվել: Ընդ որում, վճիռ կայացնելիս ընդունված պահանջները բավարարելու հիմքում դրվում է դրանք ընդունելու փաստը, իսկ չընդունված պահանջների բավարարման կամ մերժման հարցը լուծվում է ընդհանուր կանոններով, այսինքն՝ ապացույցներն առանձին-առանձին, ինչպես նաև իրենց համակցությամբ գնահատելու, դրանց հիման վրա գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների առկայության կամ բացակայության վերաբերյալ եզրահանգումներ անելու և վիճելի իրավահարաբերության նկատմամբ իրավունքի նորմերը կիրառելու միջոցով:

Թեև ձևավորված պրակտիկան ընդհանուր առամամբ բխում է տնօրինչականության սկզբունքից և հայցի ընդունման դատավարական գործողության էությունից, կարծում ենք, որ գործող ՔՂՕ-ում այն օրենսդրորեն ամրագրելու անհրաժեշտությունը վաղուց է հասունացել:

Իրավակիրառական կարևոր նշանակություն ունի այն հարցը, թե դատավարության որ փուլում պատասխանողը կարող է ընդունել հայցը: Ի տարբերություն հայցից հրաժարվելու՝ հայցն ընդունելու վերաբերյալ օրենսդիրը ՔՂՕ 32-րդ հոդվածի 2-րդ մասում անհասկանալի պատճառներով որևէ սահմանափակում չի նախատեսել, և տպավորություն է ստեղծվում, թե հայցը կարող է ընդունվել դատավարության ցանկացած փուլում: Կարծում ենք, որ պատասխանողին օրենքով պետք է վերապահվի մինչև առաջին ատյանի դատարանում դատաքննությունն ավարտվելը հայցն ընդունելու հնարավորություն՝ այն նույն նկատառումներով, որոնցով մինչև այդ պահը հայցից հրաժարվելու իրավունք է վերապահվել հայցվորին: Հաշվի առնելով հայցն ընդունելու դատավարական գործողության նպատակային ուղղվածությունը հայցը բավարարող վճիռ կայացմանը՝ չի կարելի խոսել վերաքննիչ կամ վճռաբեկ դատարաններում հայցի ընդունման իրավունքի գոյության մասին: Հայցը քննող, վեճն ըստ էության լուծող դատարանը ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանն է¹⁰, ուստի բացառապես այստեղ կարող է կատարվել այնպիսի դատավարական գործողություն, ինչպիսին հայցի ընդունումն է:

Դատական պրակտիկայում հայցն ամբողջությամբ ընդունելը հաճախ դիտվում է որպես արագացված դատաքննություն կիրառելու հիմք՝ այն պատճառաբանությամբ, որ ներկայացված հայցի դեմ առարկությունների բացակայությունը, ավելին՝ դրա ընդունումը, հայցվորին ազատում է հայցի հիմքերն ապացույցելու, իսկ դատարանին՝ գործի հանգամանքները հետազոտելու պարտականությունից: Նման մոտեցումը, մեր կարծիքով, անշուշտ հիմնավոր է: Սակայն խնդրահարույց է այն հարցը, թե արագացված դատաքննություն կիրառելու համար դատարանը արդյոք պետք է գործը նշանակի դատաքննության այն դեպքերում, երբ հայցից հրաժարումը տեղի է ունենում գործը դատաքննության նախապատրաստելու փուլում: Պրակտիկայում դատարանները նշանակում են գործը դատաքննության, սկսում են դատաքննությունը, որից անմիջապես հետո կայաց-

¹⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 24:

նում են արագացված դատաքննություն կիրառելու մասին որոշում և գործի քննությունը հայտարարում են ավարտված: Պարզեցված վարույթ կիրառելու նման «բարդացված» ընթացակարգը, որը, անշուշտ, բխում է գործող օրենսդրությունից, արդարացված չի թվում: Գտնում ենք, որ այն անհարկի ծանրաբեռնում է վարույթը, ուստի ավելի նպատակահարմար է նման դեպքերում դատարանին իրավունք վերապահել որոշում կայացնելու արագացված դատաքննություն կիրառելու վերաբերյալ առանց գործը դատաքննության նշանակելու, եթե, իհարկե, հայցից հրաժարումը ճանաչվում է իրավաչափ:

Դատավարագիտության մեջ ձևավորվել է հանրաճանաչ մոտեցում, որ հայցի ընդունումը պետք է դիտել որպես պատասխանողի *տնօրինչական գործողություն*, որի կատարմամբ նա տնօրինում է իր դատավարական իրավունքները և վեճը: Տվյալ դիրքորոշումը վիճարկվել է Վ. Կ. Պուչինսկու կողմից, որը փորձում էր հիմնավորել, որ հայցից հրաժարվելու դատավարական գործողության կատարմամբ ոչ դատավարական և ոչ էլ նյութական իրավունքներ չեն տնօրինվում: Ըստ հեղինակի՝ հայցի ընդունումն ընդհանրապես դուրս է տնօրինչականության սկզբունքի տուրույթից և լիովին վերաբերում է կողմերի մրցակցությանը¹¹: Իր դիրքորոշումը Վ. Կ. Պուչինսկին հիմնավորում էր նրանով, որ հայցի ընդունումը սկզբունքորեն չի տարբերվում կողմի բացատրության շրջանակներում արվող փաստի ընդունումից: Ըստ հեղինակի՝ հայցի ընդունման և փաստի ընդունման միջև տարբերությունը զուտ քանակական է¹²:

Հատկանշական է, որ 1955 թվականից ի վեր՝ Վ. Կ. Պուչինսկու աշխատությունը լույս տեսնելուց հետո, գրեթե բոլոր դատավարագետները նշում են, որ հայցի ընդունումից անհրաժեշտ է տարբերել փաստի ընդունումը, որը լոկ հայցապահանջը հիմնավորող ապացույց (ապացուցողական փաստ) է: Փաստի ընդունումը դեռևս հայցի ընդունում չէ¹³:

Ե. Ռ. Ռուսինովան և Ի. Մ. Ռեզնիչենկոն իրենց թեկնածուական ատենախոսություններում համոզիչ փաստարկներ են բերում Վ. Կ. Պուչինսկու դիրքորոշման դեմ: Ըստ Ե. Ռ. Ռուսինովայի՝ նշված դատավարական գործողությունները միմյանցից նախևառաջ տարբերվում են նպատակային ուղղվածությամբ: Հացի ընդունման նպատակը հայցվորի հետ վեճը դադարեցնելն ու հայցի հիմքերի դեմ առարկելու և այդ առարկությունների հիմքում դրված հանգամանքներն ապացուցելու բեռից լիովին ազատվելն է, մինչդեռ փաստի կամ առանձին վերցված մի քանի փաստերի ընդունումը բացառապես դրանց կապակցությամբ վեճն ավարտելն է՝ առանց իրավունքի և մյուս փաստերի կապակցությամբ վեճը դադարեցնելու մտադրության¹⁴: Ի. Մ. Ռեզնիչենկոն հայցից հրաժարվելու ինստիտուտի մեջ արդարացիորեն տեսնում է բոլոր տնօրինչական գործողություններին հատուկ երկակիությունը, որն արտացոլվում է, մի կողմից, հայցվորի հետ վեճը դադարեցնելու իրավունքի իրականացման և, մյուս կողմից, հայցի դեմ պաշտպանվելու բոլոր դատավարական միջոցների օգտագործումից հրաժարվելու մեջ: Ակնհայտ է, որ փաստի ընդունումը նման երկակիություն չի պարունակում: Դա ոչ թե հրաժարում է հայցի դեմ պաշտպանվելու դատավարական միջոցներից, այլ ենթադրում է առարկություն-

¹¹ Տե՛ս *Пучинский В. К.* Признание стороны в гражданском процессе. М., 1955, էջ 31:

¹² Տե՛ս նույն տեղում:

¹³ Տե՛ս, օրինակ, *Պետրոսյան Ռ. Գ.*, նշվ. աշխ., էջ 259:

¹⁴ Տե՛ս *Русинова Е. Р.* Распорядительные права сторон в гражданском процессе. Дисс... к.ю.н., Екатеринбург, 2003, էջ 88-89:

ների բացակայություն կոնկրետ փաստի վերաբերյալ, որը, սակայն, ոչ մի պարագայում ինքնին հայցի բավարարման հիմք լինել չի կարող¹⁵: Ուստի փաստի ընդունումը վերաբերում է ապացուցման ինստիտուտին, գործում է ապացուցման այլ կանոնների հետ միևնույն համակարգում, մինչդեռ հայցից հրաժարվելու դատավարական գործողությունը լիովին տնօրինչականության սկզբունքի ոլորտում է:

Նշված դատողությունները, մեր կարծիքով, իրենց արտացոլում են գտել գործող իրավակարգավորման շրջանակներում: Տեղին է հիշատակել ՀՀ ՔՂՕ 64-րդ հոդվածի 2-րդ մասը, ըստ որի՝ գործին մասնակցող անձի կողմից այն փաստն ընդունելը, որի միջոցով մյուս անձը հիմնավորում է իր պահանջները կամ առարկությունները, պարտադիր չէ դատարանի համար, և դատարանը կարող է ընդունված փաստը չհամարել հաստատված, եթե կասկածներ ունի, որ դա համապատասխանում է գործի հանգամանքներին, և կողմն այն ընդունել է խաբեության, բռնության, սպառնալիքի, մոլորության ազդեցության տակ, մեկ կողմի ներկայացուցչի հետ մյուս կողմի չարամիտ համաձայնության հետևանքով կամ ճշմարտությունը թաքցնելու նպատակով:

Ընդունված փաստը հաստատված չհամարելու շարադրված հիմքերի մեջ հատկապես ուշագրավ են այն դեպքերը, երբ դատարանը պետք է մերժի փաստի ընդունումը, եթե այն չի համապատասխանում գործի հանգամանքներին, կամ կասկածներ ունի, որ փաստն ընդունվել է ճշմարտությունը թաքցնելու նպատակով: Ապացուցման կանոնների համաձայն՝ դատարանը պարտավոր է համադրել գործով ապացուցված և ընդունված փաստերը, և եթե դրանց միջև առկա է հակասություն, դատարանը պետք է առաջարկի տվյալ փաստի ապացուցման պարտականությունը կողո կողմին ներկայացնելու այն հաստատող ապացույցներ: Հակառակ պարագայում՝ դատարանը չի կարող հակասական փաստերի հիման վրա հետևություններ անել և վեճը լուծել ըստ էության: Մինչդեռ հայցն ընդունելու դատավարական գործողությունը չի կարող մերժվել նույն նկատառումներով: Ինչպես նշում է Ե. Ռ. Ռուսինովան, որի հետ մենք լիովին համամիտ ենք, հայցի ընդունումը տնօրինչականության սկզբունքով վերապահված ազատության հետևանք է, և ապացուցման գործընթացում կիրառվող տրամաբանական կանոնները դրա վրա չեն տարածվում¹⁶:

Համամիտ ենք նաև բոլոր այն հեղինակների հետ, ըստ որոնց՝ հայցի ընդունումը պետք է մերժվի բացառապես այն դեպքերում, երբ այն հակասում է **օրենքին կամ խախտում է այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը**:

Հարկ ենք համարում նշել, որ հայցի ընդունումը դատավարական հետևանքների առումով էապես տարբերվում է հայցից հրաժարվելուց, ինչն անխուսափելիորեն էլ ավելի է մեծացնում քննարկվող դատավարական գործողության նկատմամբ դատական վերահսկողություն նախատեսելու անհրաժեշտությունը: Եթե հայցից հրաժարվելու դեպքում գործի վարույթն ավարտվում է առանց վեճն ըստ էության լուծելու, ապա հայցն ընդունելու դեպքում դատարանը վճիռ է կայացնում ոչ թե գործի վարույթը կարճելու, այլ հայցը բավարարելու մասին, որի արդյունքում վեճն ըստ էության լուծվում է, իսկ պատասխանողի պարտականությունները ենթակա են դառնում հարկադիր կատարման: Տվյալ հանգամանքը հուշում է, որ դատարանը չի կարող անվերապահորեն ընդունել

¹⁵ Տե՛ս *Резниченко И. М.* Функциональные принципы гражданского процесса (правовой и психологический аспекты). Автореф. дисс... к.ю.н., М., 1989, էջ 17-18:

¹⁶ Տե՛ս *Русинова Е.Р.* Распорядительные права сторон в гражданском процессе. Дисс... к.ю.н. Екатеринбург, 2003, էջ 89:

հայցի ընդունումը առանց հավաստիանալու, որ այդ դատավարական գործողության կատարմամբ այլ անձանց իրավունքները կամ օրենքի պահանջները չեն խախտվում: Ակնհայտ է, որ ինչ-ինչ նկատառումներով պատասխանողը կարող է ընդունել նաև ակնհայտորեն անհիմն պահանջը և դրա հիմքում դրված հանգամանքները: Եթե անխտիր բոլոր դեպքերում դատարանը պարտավոր լինի գործի քննությունն ավարտել և հեռանալ հայցը բավարարող վճիռ կայացնելու, կարող ենք ունենալ մի իրավիճակ, երբ հայցվորին վերապահվի մի իրավունք, որն իրականում նրան չի պատկանում, կամ պատասխանողի վրա դրվի մի պարտականություն, որը գործնականում նա կատարել չի կարող: Այսպես, օրինակ, եթե պատասխանողն ընդունի ընդահուր սեփականությունը բաժանելու վերաբերյալ հայցը, և դատարանը առանց կողմերի պատշաճությունը ստուգելու, գործի ելքում շահագրգռված անձանց շրջանակը վեր հանելու և գործի քննությանը ներգրավելու, վիճելի իրավահարաբերության հետ կողմերի կապը հաստատող ապացույցները հետազոտելու ավարտի գործի քննությունը և անցնի վեճն ըստ էության լուծող դատական ակտի կայացման, չի բացառվում մի իրավիճակ, երբ հոգուտ հայցվորի կվճռվի ընդհանուր գույքից բաժին այն պայմաններում, երբ հայցվորն իրականում ընդհանուր սեփականության մասնակից չի հանդիսանում: Նման վճիռ կայացնելու դեպքում կխախտվի նյութական օրենսդրությունը, ինչպես նաև կարող են ոտնահարվել գործի ելքում շահագրգռված անձանց իրավունքները և օրինական շահերը: Իհարկե նման վճիռը կարող է բողոքարկվել և բեկանվել, սակայն գտնում ենք, որ ավելի նպատակահարմար է օրենքով նախատեսել որոշակի երաշխիքներ, որոնք հնարավորինս կնվազեցնեն նման վճիռների կայացման հնարավորությունը:

Քանի որ հայցի ընդունումը ենթադրում է ոչ միայն ներկայացված պահանջի իրավաչափության, այլ նաև դրա հիքում ընկած փաստերի ընդունում, գտնում ենք, որ փաստերի ընդունման մասով դատարանը պետք է հաշվի առնի նաև արդարադատության շահերը կամ ապացուցման միջոցների թույլատրելիության կանոնները:

Խոսելով փաստերի ընդունման հետևանքների մասին՝ Ս. Գ. Մեղոյանը նշում է, որ ելնելով արդարադատության շահերից կամ ապացուցման միջոցների թույլատրելիության կանոններից՝ դատարանը պարտավոր է այս կամ այն ընդունված փաստը ներառել ապացուցման ենթակա փաստերի կազմում: Որպես օրինակ հեղինակը նշում է այն դեպքերը, երբ ընդունվում է մի փաստ, որի անարժանահավատությունն առերևույթ ակնհայտ է, կամ որը պահանջը քննելու նախապայման է համարվում (օրինակ՝ համատեղ սեփականատեր լինելու հանգամանքը կողմերին համատեղ սեփականության իրավունքով պատկանող գույքը բաժանելու պահանջը քննելու համար), կամ որը կարող է ապացուցվել բացառապես օրենքով նախատեսված ապացույցներով (օրինակ՝ անշարժ գույքի սեփականատեր լինելու, տվյալ անձից սերված լինելու փաստերը)¹⁷: Տվյալ գաղափարը, մեր կարծիքով, լիովին կիրառելի է նաև հայցի ընդունման ինստիտուտի նկատմամբ: Դատարանը պետք է հնարավորություն ունենա նախքան հայցի ընդունումը ձևակերպելը ստուգել պահանջի թեկուզև առերևույթ հիմնավորված լինելը, պահանջը քննելու նախապայմանների առկայությունը, անհրաժեշտ թույլատրելի ապացույցների առկայությունը, և եթե այդպիսիք բացակայում են, մերժել հայցի ընդունումը և շարունակել գործի քննությունը:

Կարծում ենք՝ տվյալ խնդիրը կարող է լիովին լուծված համարվել, եթե ՔԴՕ-ում ուղղակիորեն սահմանվի, որ դատարանը մերժում է հայցի ընդունումը (պահանջի ընդու-

¹⁷ Տե՛ս *Մեղոյան Ս. Գ.*, նշվ. աշխ., էջ 40-41:

նումը ճանաչում է ոչ իրավաչափ), եթե այն հակասում է օրենքին կամ խախտում է այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը:

Ընդհանրացնելով հայցն ընդունելու դատավարական գործողության հատկանիշների, դատավարական կարգի և հետևանքների վերաբերյալ վերը կատարված վերլուծությունը՝ կարելի է անել հետևյալ հետևությունները:

1. Հայցի ընդունումը պատասխանողի կողմից գործի քննության ընթացքում արված միակողմանի և անվերապահ կամահայտնություն է, որն ուղղված է իրեն ներկայացված հայցապահանջը (հայցապահանջները) բավարարող վճռի կայացման:

2. Հայցն ընդունելը տնօրինչական գործողություն է, որի արդյունքում և՛ իրավունքի, և՛ փաստերի մասին վեճը կողմերի միջև դադարում է, դատարանն ազատվում է դատական քննության առարկա հանդիսացող իրավահարաբերության հանգամանքները պարզելու, այդ նպատակով ապացուցողական գործողություններ կազմակերպելու և վեճը «ըստ էության լուծելու» անհրաժեշտությունից: Տվյալ դատավարական գործողության կատարմամբ հայցվորը հրաժարվում է իր իրավունքների պաշտպանության դատավարական միջոցներից՝ ընդունելով ներկայացված հայցապահանջի (հայցապահանջների) և դրա (դրանց) հիմքում դրված փաստերի առկայությունը:

3. Դատավարական օրենսդրությամբ հարկ է հստակ կարգավորել հայցն ընդունելու դատավարական կարգը և հետևանքները՝ նախատեսելով հետևյալ բովանդակությամբ հոդված.

«1. Մինչև առաջին ատյանի դատարանի կողմից գործով դատաքննությունն ավարտելը պատասխանողն իրավունք ունի ամբողջությամբ կամ մասնակիորեն ընդունելու հայցը:

2. Հայցի ընդունումը դատարանի կողմից մերժվում է (ճանաչվում է ոչ իրավաչափ), եթե հակասում է օրենքին կամ խախտում է այլ անձի իրավունքները օրենքով պահպանվող շահերը, կամ հիմքեր կան կասկածելու, որ տվյալ դատավարական գործողությունը կատարվում է խաբեության, բռնության, սպառնալիքի, էական նշանակություն ունեցող մոլորության ազդեցության ներքո կամ որոշակի պայմանով (վերապահումով):

3. Նախքան հայցի ընդունումն իրավաչափ ճանաչելը դատարանը պարտավոր է պատասխանողին բացատրել հայցի ընդունման դատավարական հետևանքները:

4. Եթե պատասխանողն ամբողջությամբ ընդունում է հայցը, դատարանը գործով դատաքննությունը հայտարարում է ավարտված և անցնում է հայցը բավարարող վճռի կայացման:

5. Եթե պատասխանողը հայցն ամբողջությամբ ընդունում է գործը դատաքննության նախապատրաստելու փուլում, դատարանն իրավունք ունի նախնական դատական նիստում հայցը ճանաչել ակնհայտորեն հիմնավորված և առանց գործը դատաքննության նշանակելու որոշում կայացնել արագացված դատաքննություն կիրառելու մասին:

6. Եթե պատասխանողը մասնակիորեն է ընդունում հայցը, ապա դատարանն ընդունված պահանջների մասով դատաքննությունը հայտարարում է ավարտված՝ դատաքննությունը շարունակելով այն պահանջների մասով, որոնք պատասխանողի կողմից չեն ընդունվել: Ընդունված պահանջների մասով հայցը ենթակա է բավարարման»:

ACCEPTION OF THE CLAIM AS A PART OF THE SYSTEM OF DISPOSITIVE PROCEDURAL ACTIONS

Vardush Esayan

Post graduate researcher at the Chair of Civil Procedure, YSU

In the present article the concept of procedural action of accepting the claim, its features, procedural order and consequences are scrutinized.

It is concluded that accepting the claim should be considered as diligence action which results in suspension of the dispute between the parties both on right and facts, the court is no longer in necessity to check the circumstances of the relationship subject to dispute, organize actions pursuing evidence either settle the dispute in essence. With the mentioned procedural action the claimant refuses the procedural means of protection of his rights, accepting the demand(s) in the claim and the fact(s) forming the basement.

Based on the research, procedural order and consequences of accepting the claim are proposed to be regulated in a separate article in the Civil Procedural Code of RA. The edition of the mentioned article is introduced by the author.